«Պապին և Կարեն» ՍՊԸ-ի սնանկության գործով գույքի բաց դասական եղանակով կրկնաճուրդը տեղի կունենա 27.11.2026թ. ժամը 12:45-ին ք.Երևան Արշակունյաց 5 հասցեում, 109 սենյակում:

ԼՈՏ 2. Կոտայքի մարզ, Արզական վարչական տարածք, թիվ 07-015-0151-0012 կադաստրային ծածկագրով, թիվ 0249786 սեփականության վկայականի համարով այգետնակ-մեկնարկային գինը՝ 17,124,210 ՀՀ դրամ :
Նկարագիրը՝ Հողամասի մակերեսը կազմում է 670քմ, այն տեղակայված է Արզական – Բժնի ճանապարհին մոտ՝ երկրորդ գիծ : Ճանապարհը ասֆալտապատ է գտնվում է լավ վիճակում, հողամասը ունի միջին թեքություն : Ըստ վկայականի հողամասը ծանրաբեռնված է մեկ շինությամբ՝ այգետնակ՝ 210քմ մակերեսով և հենապատով՝ 5քմ մակերեսով : Այգետնակը կառուցվել է 1980-ականներին : Այգետնակը կիսանկուղային հարկով մեկ հարկանի քարե կառույց է, միջհարկային ծածկը՝ երկաթբետոն, առաջին հարկի ներքին բարձրությունը 2.7մ է, կիսանկուղային հարկի ներքին բարձրությունը՝ 2,7 մ, մուտքի դռները մետաղական են, պատուհանները մետաղյա շրջանակներով, տեղադրված են մետաղյա ճաղավանդակներ, տանիքը թիթեղապատ է, շինության ներքին հարդարումը գտնվում է վատ վիճակում, հատակը բետոնապատ է, պատերը և առաստաղը՝ առանց հարդարման, տեղադրված չեն ներքին դռներ, սանտեխնիկական աշխատանքները իրականացված չեն :

ԼՈՏ 3. Կոտայքի մարզ, Արզական վարչական տարածք, 1-ին փող., 72 տուն, կադաստրային ծածկագիր թիվ 07-015-0151-0014, սեփականության վկայական՝ թիվ 0249787 -մեկնարկային գինը՝ 12,072,240 ՀՀ դրամ :
Նկարագիրը՝ Հողամասի մակերեսը կազմում է 380քմ, այն տեղակայված է Արզական – Բժնի ճանապարհին մոտ՝ երկրորդ գիծ : Ճանապարհը ասֆալտապատ է գտնվում է լավ վիճակում, հողամասը ունի միջին թեքություն : Ըստ վկայականի հողամասը ծանրաբեռնված է մեկ շինությամբ՝ այգետնակ՝ 169.5քմ մակերեսով : Այգետնակը կառուցվել է 1980-ականներին : Այգետնակը կիսանկուղային հարկով մեկ հարկանի քարե կառույց է, միջհարկային ծածկը՝ երկաթբետոն, առաջին հարկի ներքին բարձրությունը 2.9մ է, կիսանկուղային հարկի ներքին բարձրությունը՝ 2,3 մ, մուտքի դռները մետաղական են, պատուհանները մետաղյա շրջանակներով, տեղադրված են մետաղյա ճաղավանդակներ, տանիքը թիթեղապատ է, շինության ներքին հարդարումն ամբողջությամբ իրականացված չէ, տեղադրված չեն ներքին դռներ, սանտեխնիկական աշխատանքները իրականացված չեն, էլեկտրամոնտաժային աշխատանքները մասամբ են իրականացված :

ԼՈՏ 4. Կոտայքի մարզ, Արզական վարչական տարածք, արտադրական օբյեկտ, կադաստրային ծածկագիր թիվ 07-015-0151-0015, սեփականության վկայական՝ թիվ 2053146 -մեկնարկային գինը՝ 90,410,580 ՀՀ դրամ :
Նկարագիրը՝ Հողամասի մակերեսը կազմում է 1,640քմ, այն տեղակայված է Արզական – Բժնի ճանապարհի եզրին՝ առաջին գիծ : Ճանապարհը ասֆալտապատ է գտնվում է լավ վիճակում, հողամասը ունի մեծ թեքություն : Ըստ վկայականի հողամասը ծանրաբեռնված է մեկ շինությամբ՝ 1,471.1քմ մակերեսով արտադրական օբյեկտ և պարիսպով՝ 28.2 քմ մակերեսով: Շինությունը կառուցվել է 1980-ականներին : Արտադրական օբյեկտը երկհարկանի քարե կառույց է, միջհարկային ծածկը՝ երկաթբետոն, մուտքի դռները մետաղական են, պատուհանները մետաղյա շրջանակներով, տանիքը թիթեղապատ է, շինության մեծ մասում ներքին հարդարումը իրականացված է, տեղադրված չեն ներքին դռներ, սանտեխնիկական և էլեկտրամոնտաժային աշխատանքները մասամբ են իրականացված :

ԼՈՏ 5. Կոտայքի մարզ, Արզական վարչական տարածք, արտադրամաս, կադաստրային ծածկագիր թիվ 07-015-0151-0016, սեփականության վկայական՝ թիվ 0249757 -մեկնարկային գինը՝ 59,573,880 ՀՀ դրամ :
Նկարագիրը՝ Հողամասի մակերեսը կազմում է 690քմ, այն տեղակայված է Արզական – Բժնի ճանապարհի եզրին՝ առաջին գիծ : Ճանապարհը ասֆալտապատ է գտնվում է լավ վիճակում, հողամասը ունի միջին թեքություն : Ըստ վկայականի հողամասը ծանրաբեռնված է երկու շինությամբ՝ արտադրամաս 801.9քմ մակերեսով, պահեստ 101.8 քմ մակերեսով և պարիսպով 9.4քմ մակերեսով : Շինությունը կառուցվել է 1980-ականներին : Արտադրմասը երկհարկանի քարե կառույց է, միջհարկային ծածկը՝ երկաթբետոն, առաջին հարկի ներքին բարձրությունը՝ 3,97մ է, երկրորդ հարկի ներքին բարձրությունը՝ 3,1մ է, մուտքի դռները մետաղական են, պատուհանները մետաղյա շրջանակներով, տեղադրված են մետաղական ճաղավանդակներ, տանիքը թիթեղապատ է : Շինության ներքին հարդարումը գտնվում է միջինից վատ վիճակում, հատակը՝ բետոնապատ է, պատերը առանց հարդարման : Պահեստը մեկ հարկանի քարե կառույց է, միջհարկային ծածկը՝ երկաթբետոն, ներքին բարձրությունը՝ 2.9մ է, մուտքի դուռը մետաղական է, պատուհանները մետաղյա շրջանակներով, տեղադրված են մետաղական ճաղավանդակներ, տանիքը թիթեղապատ, շինության ներքին հարդարումը գտնվում է միջինից վատ վիճակում, հատակը՝ բետոնապատ, պատերն՝ առանց հարդարման :

ԼՈՏ 6. Կոտայքի մարզ, Նոր Գյուղ, 1-ին փողոց, թիվ 22 հասցեում գտնվող անշարժ գույք-մեկնարկային գինը՝ 119,541,420 ՀՀ դրամ :
Նկարագիրը՝ Անշարժ գույքը տեղակայված է գյուղի բնակելի տներով և արտադրական շինություններով կառուցապատված թաղամասում, գլխավոր ճանապարհից մոտ 500մ հեռավորության վրա, ճանապարհը գրունտային է, գտնվում է բավարար վիճակում : Մակերեսը ըստ վկայականի կազմում է 0,82 հատեղանքը հարթ չէ, առկա են տարբեր թույլ թեքություններ, հողամասը բարեկարգված չէ : Հողամասն ըստ վկայականի ծանրաբեռնված է մեկ շինությամբ՝ անասնաշենք 1,100.8 քմ մակերեսով : Շինությունը կառուցվել է 1960-ական թվականներին : Տեղազննության օրվա դրությամբ շինությունը գտնվում է միջին վիճակում : Անասնաշենքը մեկ հարկանի քարե շինություն է, միջհարկային ծածկը երկաթբետոն է, տանիքը երկլանջ, պատված ազբոշիֆերով, միջհարկային բարձրությունը 3,4մ, մուտքի դարպասը մետաղական է, պատուհանները՝ փայտե շրջանակներով, հատակը բետոնապատ, պատերը առանց հարդարման :Ներառված է հողամասի կադաստրային արժեքը :

ԼՈՏ 7. Կոտայքի մարզ, Ջրվեժ համայնք, Ջրվեժ գ., կադաստրային ծածկագիր թիվ 07-057-0324-0012, սեփականության վկայական՝ թիվ 18052022-07-0143 -մեկնարկային գինը՝ 31,033,530 ՀՀ դրամ :
Նկարագիրը՝ Հողամասը գտնվում է բնակելի տարածքին մոտ, հարևանությամբ կան կառուցապատված հողամասեր, հողամասը գտնվում է Արտաշատի խճուղուց մոտ 50 մետր հեռավորության վրա, հողամասը հարթ է բազմամյա տնկիներ առկա չեն : Գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը վարելահող: Ոռոգելի: Հողամասի չափը 0.1515 հա է : Իրավունքի տեսակը՝ Ընդհանուր բաժնային սեփականություն: Տրանսպորտային մատչելիություն գնահատվոում է լավ: Տարածաշրջանի գրավչությունը՝ միջինից բարձր է, դիրքը գնահատվում է լավ:

Գնորդը կատարելու է գույքի ձևակերպման և գրանցման հետ կապված ծախսերը:
Գույքի աճուրդը կանցկացվի «Պարտապանին պատկանող գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու կարգը հաստատելու մասին» ՀՀ Արդարադատության նախարարի 16.03.2020 թվականի թիվ 116-Ն հրամանի և 16.06.2025թվականի թիվ 385-Ն հրամանի համաձայն:
Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձիք աճուրդի հայտարարությամբ սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ, քան աճուրդի անցկացման օրվանից հինգ աշխատանքային օր առաջ՝ 23.11.2026 թվականը ներառյալ, մինչև ժամը 16:00-ն կարող են աճուրդի մասնակցության հայտ (այսուհետ՝ հայտ) ներկայացնել ՀՀ ք. Երևան, Օտյան 53/2 հասցեում գտնվող ՀՀ Սնանկության դատարան:
Հայտում նշվում է.
1. Հայտատու իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, ծանուցման հասցեն, իրավաբանական անձի ներկայացուցչի անուն ազգանունը, կոնտակտային տվյալները, էլեկտրոնային հասցեն:
2. Հայտատու ֆիզիկական անձի դեպքում՝ անձի անունը, ազգանունը, ծանուցման հասցեն, կոնտակտային տվյալները, էլեկտրոնային հասցեն , ներկայացուցչի միջոցով հանդես գալու դեպքում՝ ներկայացուցչի անունը, ազգանունը, ծանուցման հասցեն, կոնտակտային տվյալները, լիազորագիրը բնօրինակ ՝ պատշաճ վավերացմամբ, էլեկտրոնային հասցեն:
3. Պարտապանի անվանումը(Ֆիզիկական անձի դեպքում անուն ազգանունը):
4.Աճուրդի անցկացման օր, ամիս, ամսաթիվը:

5. Կառավարչի անունը, ազգանունը:
6. Հայտին կցվող փաստաթղթերի ցանկը:
7. Հայտատուն հայտում նշում է կատարում այն մասին, որ տեղեկացված է, որ ծանուցումները և փաստաթղթերը ուղարկվելու են հայտում նշված Էլեկտրոնային փոստի հասցեին և որ դա համարվում է պատշաճ ծանուցում: Հայտատուն կրում է իր կողմից տրամադրված էլեկտրոնային հաղորդակցության միջոցներին ուղարկված ծանուցումները չկարդալու անբարենպաստ հետևանքները:

Հայտը ստորագրվում է հայտատուի(ներկայացուցչի միջոցով հանդես գալու դեպքում՝ ներկայացուցչի) կողմից:
Հայտին կից ներկայացվում են.
-Լոտի մեկնարկային գնի հինգ տոկոսի չափով նախավճարի վճարումը աճուրդի մասին հայտարարությունում նշված սնանկության հատուկ հաշվին կատարված լինելու փաստը հաստատող անդորրագիրը:
- Լոտի մեկնարկային գնի մեկ տոկոսի, բայց ոչ ավել, քան նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով աճուրդի մասնակցության վճարի վճարումը աճուրդի մասին հայտարարությունում նշված սնանկության հատուկ հաշվին կատարված լինելու փաստը հաստատող անդորրագիրը:
-Լիազորագիր, եթե հայտատուն հանդես է գալիս լիազոր անձի միջոցով:
-Իրավաբանական անձ հայտատուների դեպքում՝ նաև պետական գրանցումը հավաստող փաստաթղթի և կանոնադրության, ինչպես նաև իրավաբանական անձի ներկայացուցչի հածը հաստատող փաստաթղթի պատճենները:
-Անհատ ձեռնարկատեր հայտատուների դեպքում նաև պետական հաշվառումը հավաստող փաստաթղթի և անձը հաստատող փաստաթղթի պատճենները:
- Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ հայտատուների դեպքում՝ նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

Աճուրդին կարող են ներկա գտնվել նաև աճուրդի մասնակից չհամարվող անձինք, ներառյալ՝ ՀՀ Արդարադատության նախարարի գրավոր հանձնարարությամբ՝ ՀՀ Արդարադատության նախարարության ներկայացուցիչներ:
Աճուրդի մասնակից չհամարվող անձինք աճուրդին ներկա գտնվելու համար աճուրդի հայտարարությամբ սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ, քան աճուրդի անցկացման օրվանից հինգ օր առաջ ՀՀ ք. Երևան, Սմբ Զորավարի փող տուն 2 հասցեով կամ gshakeh@yahoo.com Էլեկտրոնային հասցեով ուղարկում են ծանուցում՝ հայտնելով աճուրդին ներկա գտնվելու մասին՝ նշելով անունը, ազգանունը(անվանումը), ծանուցման հասցեն կոնտակտային տվյալները: Ծանուցմանը կից ներկայացվում է անձը հաստատող փաստաթղթի պատճենը, նախարարության ներկայացուցչի դեպքում նաև նախարարի գրավոր հանձնարարականը:
Աճուրդի մասնակցության մեկ տոկոս և հինգ տոկոս նախավճարի գումարները պետք է վճարվեն «Արդշինբանկ» ԲԲԸ-ում բացված թիվ 2473608164970009 սնանկության հատուկ հաշվեհամարին:
Աճուրդում հաղթող է համարվում առավել գին առաջարկող մասնակիցը:
Աճուրդում հաղթած և աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը ստորագրած անձը պարտավոր է վճարել լոտի վաճառքի գինը արձանագրությունը ստորագրելուց հետո տաս օրվա ընթացքում՝ նվազեցնելով վճարված նախավճարի չափը:
Նշված ժամկետում վաճառքի գինն ամբողջությամբ չվճարելու դեպքում աճուրդը համարվում է չկայացած, իսկ աճուրդի հաղթողի կողմից վճարված նախավճարը և մասնակցության վճարը չեն վերադրաձվում:
Վաճառքի գինն ամբողջությամբ վճարվելուց, այն փաստացի սնանկության հատուկ հաշվին մուտքագրվելուց և սահմանված վճարումների կատարումը հավաստող փաստաթղթերը կառավարչին ներկայացնելուց, արգելանքները վերացվելուց հետո՝ կնքվում է լոտի առուվաճառքի պայմանագիր:
Աճուրդի ընթացքը կառավարչի կողմից ձայնագրվում է, իսկ աճուրդային սենյակը տեսաձայնագրվում:
Լոտը կարելի է ուսումնասիրել սույն հայտարարության հրապարակման օրվանից սկսած՝ նախապես պայմանավորվելով կառավարչի հետ:

Լոտի մասին տեղեկություններ ստանալու և աճուրդին առնչվող ցանկացած այլ հարցով կարող եք զանգահարել սնանկության գործով կառավարիչ Շաքե Ղազարյանին՝ հեռ. 094-10-88-31 կամ գրել gshakeh@yahoo.com էլեկտրոնային հասցեին: